

ԼՐԱ

ՏՈՒ

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ

ԴԵՍՊԱՆ ԱՐԳՈ ԱՎԱԿՈՎԸ ՅԱՆԴԻՊԵՑ ԶՅ ՆԱԽԱԳԱՅԻ ԶԵՏ



Ապրիլի 14-ին ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի տնօրենական ղեկավար, դեսպան Արգո Ավակովը հանդիպեց Նախագահ Սերժ Սարգսյանի հետ: Նախագահը շնորհավորեց դեսպանին նոր նշանակման կապակցությամբ և վստահություն հայտնեց, որ վերջինիս երկարամյա փորձը կօգնի նրան Յայաստանում իր առաքելությունն արդյունավետորեն իրականացնելու գործում: Դեսպան Ավակովը վստահեցրեց, որ իր պաշտոնավարման ընթացքում կանի ամեն հնարավորն արդեն ձևավորված բարձր մակարդակի համագործակցությունն առավել զարգացնելու և խորացնելու ուղղությամբ:

Չրուցակիցները մտքեր փոխանակեցին Յայաստանում սահմանադրական փոփոխությունների շրջանակներում ընթացող գործընթացների և Ըստրական օրենսգրքի փոփոխությունների վերաբերյալ: Նրանք քննարկեցին նաև ԵԱՀԿ-ի կողմից երեք տարբեր հարթություններում իրականացվող այլ ծրագրեր:

ԵԱՀԿ ԳՈՐԾՈՂ ՆԱԽԱԳԱՅԻ ԱՅՑԸ ԳՐԱՍԵՆՅԱԿ



ԵԱՀԿ գործող Նախագահ և Գերմանիայի արտաքին գործերի Նախարար Ֆրանկ-Կալտեր Շտայնմայերը, Յարավային Կովկասի երեք երկրներ իր պաշտոնական այցի շրջանակներում հունիսի 29-30-ին գտնվելով Յայաստանում, այցելեց Գրասենյակ և հանդիպեց քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

Նախագահին իր գնահատանքը հայտնեց բոլոր երեք հարթություններում Գրասենյակի գործունեության վերաբերյալ և գովաբանեց վերջինիս սերտ համագործակցությունը Յայաստանի հաստատությունների հետ:

Շտայնմայերին ողջունեց Գրասենյակի ղեկավար, դեսպան Արգո Ավակովը: «Երևանյան գրասենյակը սերտորեն համագործակցում է Յայաստանում պետական կառույցների և քաղաքացիական հասարակության հետ և ողջունում է գործող Նախագահի այս այցը», - ասաց Ավակովը: «Քաղաքացիական հասարակությունը կարևոր դերակատարում ունի Յայաստանում ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահության բարձրացման, ոստիկանություն-հասարակություն գործընկերության բարելավման, ինչպես նաև կանանց ու երիտասարդների ներգրավումը և լրատվամիջոցների ազատությունը խթանելու գործում»:

ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՅԱՅԻՆ ԶԱՐՏԵՉ



Մայիսի 27-ին և 28-ին ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի, Արդարադատության նախարարության և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից ճաշակածորում համատեղ կազմակերպված աշխատաժողովի ուշադրության կենտրոնում Զայաստանի իրավակարգավորման բարեփոխումների ճանապարհային բարտեզի ամփոփումն էր: Գործադիր, օրենսդիր ճյուղերի, բաղաբացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները փոխանակեցին տեսակետներ՝ երկրում օրինաստեղծ ողջ գործընթացի բարելավման ուղիների վերաբերյալ: Զննարկվող թեմաներն էին՝ բաղաբացիական մշակում և օրենսդրական պլանավորում, հանրային բնարկումներ և կարգավորման ազդեցության գնահատում, ինչպես նաև օրենսդրության մշտադիտարկում և գնահատում: Աշխատաժողովի նպատակն էր բնարկել 2015թ. Զայաստանում անցկացված նախկին թեմատիկ օրինաստեղծ աշխատաժողովների ժամանակ և 2014թ. ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի կողմից «Զայաստանում օրենսդրական ընթացակարգի համակողմանի գնահատում» զեկույցում ներկայացված բարեփոխման առաջարկները:

ԿԱՆԱՉ ԱՃԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Մայիսի 11-ին Գրասենյակը և ՏՀԶԿ-ն կազմակերպեցին ազգային աշխատաժողով՝ երկրում կանաչ տնտեսության խթանման գնահատման մեթոդոլոգիաները ներկայացնելու նպատակով: Աշխատաժողովի մասնակիցները շուրջ երեսուն էին՝ Էկոնոմիկայի և բնապահպանության նախարարությունների, Ազգային վիճակագրական ծառայության, գիտական շրջանակների և բաղաբացիական հասարակության ներկայացուցիչներ, ինչպես նաև ազգային և միջազգային փորձագետներ: Սլովակիայից և Ուկրաինայից ժամանած փորձագետները ներկայացրեցին կանաչ աճի ցուցանիշների կիրառման՝ կայուն զարգացումը գնահատելու իրենց երկրների փորձը: Միջոցառումը նշանավորեց ԵԱՀԿ կողմից իրականացվող ծրագրի մեկնարկը՝ ուղղված կանաչ աճի ցուցանիշների հիման վրա և միջազգային ու ազգային փորձագետների ներգրավմամբ գնահատելու Զայաստանում տնտեսական իրավիճակը:

ԿԻԲԵՐԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԸ



Մարտի 23-ին Գրասենյակը՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և Ներքին գործերի մշտական հանձնաժողովի և Երևանում բրիտանական դեսպանատան հետ համատեղ, կազմակերպեց միջազգային համաժողով՝ դիտարկելու կիբերանվտանգության ոլորտի զարգացումները և առնչվող կարգավորման դաշտը: Միջոցառման շուրջ վաթսուն մասնակիցները՝ պետական կառույցների, խորհրդարանի, մասնավոր ոլորտի ներկայացուցիչներ, միջազգային և տեղի փորձագետներ, մտքեր փոխանակեցին լավագույն փորձի վերաբերյալ:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԵՍՈՒՉՆԵՐ

2014թ. ոստիկանության դպրոցական տեսուչների պաշտոնի հիմնադրման պահից ի վեր Գրասենյակը խորապես ներգրավված է եղել նրանց կարողությունների զարգացման, նոր գիտելիքների և հմտությունների ուսուցման գործում՝ ուսանողների, ծնողների, ուսուցիչների և այլ գործընկերների հետ սերտ հարաբերություններ ձևավորելու նպատակով: Փետրվարի 26-ին Գրասենյակը՝ Ոստիկանության ու Կրթության և գիտության նախարարության հետ համատեղ, կազմակերպեց դպրոցական տեսուչների դերի, նրանց աշխատանքի գործնական կողմերի, ինչպես նաև խնդիրների և մարտահրավերների վերաբերյալ կլոր-սեղան բնարկում: Միջոցառմանը մասնակցեցին վաթսուն դպրոցական տեսուչներ, ոստիկանության բաժինների ղեկավարներ, դպրոցի տնօրեններ և այլ հետաքրքրված անձինք:

ՀԱՄԱԵՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ



ԵԱՀԿ-ն, ԱՄՆ դեսպանատունը, ԵՄ պատվիրակությունը, Բրիտանական դեսպանատունը, Եվրոպայի խորհուրդը և ՄԱԿ-ը մեծարեցին իրենց աշխատանքով Հայաստանում մարդու իրավունքների զարգացմանը նպաստող անհատներին հունիսի 23-ին Երևանում տեղի ունեցած Համընդհանուր իրավունքների մրցանակաբաշխության արարողության ընթացքում: ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Արգո Ավակովը «Խիզախ կին» մրցանակը շնորհեց Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա ՀԿ-ի նախագահ Ջեմմա Հասրաթյանին՝ ի գնահատումն նրա ջանքերի՝ խթանելու Հայաստանում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներն և հնարավորությունները: Մրցանակակիրների շարքում էին «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությունը (Ազատության պաշտպան), «Ֆոտոլուր» լրատվական գործակալությունը (Մեդիա գերազանցություն), Տարածքային զարգացման և կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը (Կառավարության բարեփոխիչ), Չարուհի Բաթյանը (Ներառման խթանում) և Լոռու մարզի դատարանի դատավոր Նարինե Հովակիմյանը (Արդարության խթանում բոլորի համար):

ՀՈՐԱՑՆԵԼՈՎ ԿԱՆԱՆՑ

Գրասենյակը՝ Նոր հիմնադրված Կանանց ռեսուրս կենտրոնների (ԿՌԿ) հետ համատեղ, նախաձեռնել է կարողությունների զարգացման ծրագրեր իջևանում, Սիսիանում, Եղեգնաձորում: Ծրագրերի նպատակն է ԿՌԿ անձնակազմի անդամների ինստիտուցիոնալ կարողությունների և առաջնորդության հմտությունների զարգացման միջոցով խթանել կանանց դերակատարումը քաղաքական, հանրային և տնտեսական ոլորտներում և բարելավել երիտասարդ կանանց գիտելիքներն ու հմտությունները՝ տեղի որոշումների ընդունման գործընթացներում մասնակցելու համար:

ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Մարտի 24-26-ին Գրասենյակը՝ ԺՀՄԻԳ-ի հետ համագործակցությամբ, կազմակերպեց միգրանտների իրավունքների վերաբերյալ դասընթաց՝ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության խնդրանքով: Դասընթացների կազմակերպման նպատակն էր աջակցել իշխանություններին՝ երաշխավորելու միգրացիոն կառավարման պրակտիկայի համապատասխանությունը միջազգային իրավական պարտականություններին և ԵԱՀԿ հանձնառություններին, որոնք պաշտպանում են միգրանտների մարդու իրավունքները: Դասընթացի մասնակիցները շուրջ քսանհինգն էին՝ համապատասխան Նախարարությունների, Փաստաբանների պալատի, ինչպես նաև միգրացիոն հարցերով զբաղվող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ ու իրավաբաններ:





ԴԱՏԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Հունիսի 11-ին և 12-ին Դիլիջանում ԵԱՀԿ աջակցությամբ կազմակերպված ուսուցողական աշխատաժողովի ուշադրության կենտրոնում Հայաստանի Վճռաբեկ դատարանի վերջին որոշումներում արտացոլված մարդու իրավունքներն ու արդար դատավարության չափանիշներն էին: Աշխատաժողովի նպատակն էր խթանել արդարադատության թափանցիկությունն ու կանխատեսելիությունը և օրենքի միասնական կիրառումը: Ընդհանուր իրավասության և Վերաքննիչ դատարանի շուրջ բառասուրճ դատավորներն ու նրանց օգնականները քննարկեցին մարդու իրավունքների և միջոցառումների վարույթի նկատմամբ դատական վերահսկողության, անմեղության կանխավարկածի, ազատության ու անձի անձնամիջոցի իրավունքի, ինչպես նաև արդար դատավարության այլ երաշխիքների հետ կապված Վճռաբեկ դատարանի նախադեպային կարևոր որոշումները: Սա 2015թ. նոյեմբերից ԵԱՀԿ աջակցությամբ կազմակերպվող և մայրաքաղաքի ու մարզերի քրեական իրավունքի ոլորտի միջև հարյուր դատավորների և նրանց օգնականների համար դասընթացներ ապահովող միջոցառումների շարքում չորրորդ միջոցառումն էր:

Հայաստանի դատավորները՝ Վճռաբեկ դատարանի նախագահի գլխավորությամբ, մասնակցեցին Դատավորների Եվրոպական միության ամենամյա հանդիպմանը, որը տեղի ունեցավ մայիսի 21-23-ին

Երուսաղեմում՝ Իսրայելում: Հանդիպման նպատակն էր անդամ պետությունների միությունների՝ Ներառյալ Հայաստանի, կապերի զարգացման միջոցով, բարելավել դատական անկախությունը, արդարադատության որակը և իրավունքի գերակայությունը:

Փետրվարի 3-ին Գրասենյակը արդարադատության ծախսողումների հետևանքների և դրանց վերացման գործիքների վերաբերյալ աշխատաժողովի կազմակերպիչներից էր: Միջոցառումը բարձրացրեց իրավունքի ոլորտի մասնագետների՝ արդար դատավարության ոլորտի նորարարությունների և սխալմամբ դատապարտված անձանց արդարությունը վերականգնելուն ուղղված ընդլայնված դատական երաշխիքների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գրասենյակը՝ Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի իրավական նախաձեռնության (ABA/CEELI) հետ համատեղ, աջակցեց կենտրոնացված էլեկտրոնային տվյալների բազայի ձևավորմանը, որն ապահովում է մարզերում Հանրային պաշտպանի գրասենյակների կապը Երևանում Փաստաբանների պալատին կից կենտրոնական գրասենյակի հետ:

ԵԱՀԿ մասին

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ) գործում է հանուն իր 57 մասնակից պետությունների կայունության, բարօրության և ժողովրդավարության՝ համընդհանուր արժեքների շուրջ բաղադրական երկխոսության և գործնական աշխատանքների միջոցով՝ հետամուտ բարելավմանը:

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը հիմնադրվել է 2000 թվականին Հայաստանին՝ ԵԱՀԿ առջև անվտանգության բոլոր երեք ուղղություններով՝ ռազմաքաղաքական, տնտեսական և բնապահպանական և մարդու իրավունքներ, ստանձնած իր պարտավորությունների կատարմանը օժանդակելու համար:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ՝ Սուևոդկյան 64/1, հեռ.՝ (0037410) 229610/11/12,

Էլ. փոստ՝ yerevan-am@osce.org, կայքէջ՝ <http://www.osce.org/yerevan>: